

ՀՈԴՎԱԾՆԵՐ ՀԱՅԵՐԵՆՈՎ

ՓԻԼՍՈՓՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԱԳՆԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ՀԱՅՈՑ ՄԵՁ

Բարսեղյան Պարզև Աշոտի

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի պետական համալսարան, Հայաստան, Երևան

Հայոց հեթանոսական դիցարանի մասին մեզ հասած սուղ տեղեկությունները վկայում են, որ հայոց դիցարանի կարևոր աստվածություններից մեկն արևի, կրակի, պատերազմի, քաջության և հաղթանակի աստված Վահագնն էր: Նրա պաշտամունքի արմատները հասնում են մինչև հնդեվրոպական միասնականության շրջան [6, 36], իսկ անունը «Առավել հավանական է, որ ...կազմված լինի Վահ (աստված) և Ագնե (կրակ) բառերից և նշանակում է՝ կրակի աստված» [5, 225]: Վահագնի անվան ստուգաբանության վերաբերյալ արտահայտվել են տարբեր, երբեմն իրարամերժ կարծիքներ: Մասնավորապես կա այն կարծիքը, որ անունը բաղկացած է «... սանսկրիտ. Վահ (Vah) արմատեն, որ կը նշանակե բերել, բերող, եւ ագնի (agni) գոյականէն, որ հուր կը նշանակէ. Ապա ուրեմն Վահագն է Բերող-հրոյ կամ Հրաբեր.» [4, 26]: Ս. Հարությունյանը առավել հավանական է համարում այն, որ «անունը թեպետ հանգում է իրանական Վրթրագնա («հաղթանակ, հարձակման խափանում»), Վար(հ)(ր)ագն անվանաձևին, սակայն բուն պաշտամունքով մինչև հնդեվրոպական հնություններն հասնող խոր արմատներ ունի հայ կրոնադիցաբանական ավանդության մեջ» [6, 36]:

Վահագնը Արամազդի և Անահիտի հետ միասին համարվել է հայոց դիցաբանական եռաստվածային համակարգի երրորդ դեմքը, որից Տրդատ արքան «քաջություն ամենայն Հայոց աշխարհիս» է խնդրում [2, 64] : Վահագնի ամենահայտնի «մեծագանձ մեհյանը լի ոսկով ու արծաթով և մեծամեծ թագավորների ձոնած բազում նվերներով» [2, 130] կոչվում էր «Վահեվանյան» և գտնվում էր Տարոն գավառի Աշտիշատ ավանում, Քարքե լեռան վրա, Անահիտի և Աստղիկի մեհյանների կողքին:

Հատկապես ուշագրավ է Վահեվանյան անունը, քանի որ Վահագնի պաշտամունքը հիմնականում իրականացնում էին հենց այս անունը կրող Վահունի քրմական նախարարական տան ներկայացուցիչները: Այս

հանգամանքը հաստատում է այն կարևոր փաստը, որ Վահագնը հայոց դիցաբանական հին շրջանի աստվածներ Հայկի, Արամի և Տորքի նման օժտված է եղել նախնի աստվածության հատկանիշներով: Այս կարևոր հանգամանքը հաստատում է նաև Անանիա Շիրակացու միջոցով մեզ հասած հայտնի ավանդությունը, որտեղ ասորիների նախնի Բարշամի դեմ պայքարող Վահագնն ակնհայտորեն անվանվում է «հայոց նախնի» [3, 151]: Այս ավանդությունն անմիջականորեն կապված է եղել նաև աստղագարդ երկնքի դիցաբանական ընկալումների հետ և Վահագնը, իբրև Ծիր Կաթինի մասին առասպելի հայկական տարբերակի գլխավոր հերոս, ձեռք է բերել իմացաբանական նշանակություն և ներկայացել է հին հայերի աշխարհաճանաչողության կարևորագույն դրվագներից մեկի սիմվոլիկ պատկերի տեսքով:

Ընդհանրապես պետք է կարևորենք այն հանգամանքը, որ Վահագնը նախապես խորհրդանշել է արևի պաշտամունքը և միայն հետո է ձեռք բերել ամպրոպային ու կայծակնային հատկանիշներ: Այս տեսակետն է պաշտպանում Գ. Ղափանցյանը, չնայած որ իրականում ամպրոպային և արեգակնային դիցաբանական սիմվոլները, մեր կարծիքով այնքան էլ իրարից չեն տարբերվում, այլ ընդհակառակը միմյանց փոխլրացնում են [12, 65]: Վահեվան մեհյանի անունը Գ. Ղափանցյանը ստուգաբանում է «Վահեին (Վահագնին) պաշտող, ուր vahe-ն փաղաքշական կրճատ ձևն է Վահագնից» [12, 65]: Արեգակնային Վահագնի պաշտամունքի վերապրուկներից մեկը 20-րդ դարում պահպանված բանահյուսական մի պատահիկ է, որը ևս հաստատում է, որ Վահագնին նաև կրճատ անվանել են Վահե.

«Էգ բարև, այ էգ, բարև
 Էգն արևուն տանք բարև
 Տայ թագավորին շատ արև
 Վահե, վահե...» [7, 27]:

Ուսումնասիրողներից ոմանք էլ Վահե անունը կապում ենք Vah հնդեվրոպական արմատի հետ՝ արև իմաստով [11, 50-51]: Այսպիսով կարող ենք փաստել, որ Վահագնն ունեցել է զարգացած պաշտամունք: Չնայած որ նմանատիպ խորհրդանշաններ առկա են նաև հնդիրանական դիցարանում (Վերեթրագնա), այնուամենայնիվ կարծում ենք, որ դրանք կարող են փաստել միայն Վահագնի պաշտամունքի ընդհանուր հնդեվրոպական ծագումը: Այդ տեսանկյունից անընդունելի պետք է համարել Շ. Գելցերի հակասական այն կարծիքը, թե «Իրանեան ծագումն ունի նոյնպես Վահագն, որ թերևս Հայոց ամենէն ավելի բնիկ ազգային եւ ժողովրդական չաստուածն է» [4, 26]: Տարօրինակ է, որ Վահագնին «բնիկ ազգային» աստվածություն համարելով՝ Գելցերը, միաժամանակ հակասելով իրեն, պնդում է, թե Վահագնն իրանական ծագում ունի: Իրականում Վահագնն ունի զուտ ազգային դիցաբանական պաշտամունք, համարվում է Աստղիկի զույգը, երևույթ, որը բացակայում է իրանական միջավայրում:

Վահագնի դիցաբանական հիմնական հատկանիշներից հաջորդն այն է, որ նա վիշապամարտիկ է և կրում է «վիշապաքաղ» մակդիրը: Նրա ծնունդը պատկերող հայտնի բանաստեղծության բովանդակային շարունակությունն ըստ Խորենացու այն է, որ «Հուր մագերով և բոց մորուսով» արեգակնային Վահագնը պայքարի մեջ է մտնում վիշապների դեմ [8, 54]: Վիշապամարտության այդ ըմբռնումը Վահագնին պատահականորեն չի վերագրվել և, վաղ ժամանակներից սկսած, այն հանդիպում է հայ ժողովրդի ստեղծած բանահյուսական ժանրի գրեթե բոլոր ստեղծագործություններում (Էպոս, վիպասանք, առասպել, հեքիաթ, հանելուկ): Այդ մասին հատկապես մանրամասն խոսում է Մանուկն Աբեղյանը [1, 400]:

Վահագնի ծնունդն, այսպիսով, տիեզերածնական բովանդակություն ունի, ուր առկա են արարչագործական հատկանիշներով օժտված հակադիր սկզբունքների հակամարտություն և սրբագործված չորս նախատարբերի պաշտամունքի անուրանալի հետքեր: Այդ տեսանկյունից հետաքրքրական է Մ. Խորենացու մոտեցումը, ով, էվգեմերականության հետևությամբ, Վահագնին ներկայացնում է իբրև հայ պատմական հերոս, որի պաշտամունքը տարածված է եղել նաև դրացի Վրաստանում [8, 54]: Այս մոտեցումը, սակայն, հնացած է և

անընդունելի արդի կրոնագիտության դիրքերից: Լ. Շահինյանը ևս Վահագնին համարում է իրական պատմական անձ, հայոց թագավոր, ով հետո է միայն աստվածացել հայերի համար [9, 75-80]: Ըստ Վ. Չալոյանի՝ Վահագնի առասպելում նշված չորս տարրերը՝ հողը, օդը, ջուրը և կրակը, հանդիսանում են գոյի նախահիմքը, իսկ Վահագնի հաղթանակը վիշապների նկատմամբ արտացոլում է հակադրությունների պայքարը միասնական սուբստանցիայի՝ բնության ընդերքում [13, 2-23; 14, 14]: Մեր կարծիքով վիշապների դեմ Վահագնի մենամարտը և հաղթանակը ներկայացնում է բնական երևույթի խորհրդանշական պատկեր, որը հին հայերի դիցաբանական երևակայության արդյունքն է, երբ երկնքում ամպեր (վիշապներ) էին կուտակվում, ծածկում արևը, և արեգակնային Վահագնի հաղթանակը խորհրդանշում էր երկունք ապրող երկրի և ամպերի միջից ծնվող արեգակը:

Վահագնի վիշապամարտ հատկանիշներով են օժտված նաև հայոց ազգային էպոսի բոլոր ճյուղերի հերոսները, որը հստակորեն արտացոլված է հատկապես Սանասարի ճյուղում: Մ. Աբեղյանը Սանասարին վերագրում է ամպրոպային հատկություններ և նմանեցնում Վահագնին [1, 144]: Վահագնի և Սանասարի ընդհանրությունը դրսևորվում է նաև նրանց ամպրոպածին հատկանիշներում: Երկուսի գործողություններն էլ կարող են անձրև առաջացնել: Սանասարը սպանում է վիշապին, որից հետո անձրև է տեղում [10, 69]: Մեկ այլ դրվագում Սանասարն ու Բաղդասարը քարերով սպանում են վիշապին [10, 81]:

Սանասարի դրոցագունների ամպրոպային հատկանիշներով օժտված լինելու վկայությունը նրանց կայծակնային Թուր Կեծակին է. կայծակը ամպրոպային աստվածությունների գլխավոր հատկանիշներից է, մեր համոզմամբ նաև մեկ այլ նախածին տարրի՝ կրակի խորհրդանիշը:

Ընդհանրացնելով այդ ամենը՝ կարող ենք փաստել, որ Վահագնի պաշտամունքն իր մեջ խտացրել է հնդեվրոպական դիցաբանական վիշապամարտ հերոսներին հատուկ սիմվոլներ և, քանի որ նա հանդես է գալիս նաև իբրև կուլտուրական հերոս, ակնհայտ է դառնում, որ նրա պաշտամունքը բազմաշերտ է և դիցաբանական երկարատև զարգացում ապրած. սկզբում արևի աստվածություն, հետո ամպրոպի և կայծակի, այնուհետև դիցաբանական նախնի և, ի վերջո, քաջության, ռազմի և հաղթանակի աստված:

Գրականության ցանկ:

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Երևան, ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1966. - 571 էջ:

2. Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1977. – 191 էջ:
3. Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, «Գրիգոր Տաթևացի» ՄՊԸ տպ., 2002. – 295 էջ:
4. Գելցեր Հ., Հետազոտություն հայ դիցաբանության, Վենետիկ, Ս. Ղազար, 1897. – 136 էջ:
5. Դիցաբանական բառարան, Երևան, «Լույս», 1985. – 264 էջ:
6. Հարությունյան Ս., Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Ընդհանուր ակնարկ, Երևան, «Մուղնի» հրատ., 2001, - 81 էջ:
7. Մելիք-Փաշայան Կ., Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963. – 163 էջ:
8. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, «Հայաստան» հրատ., 1990. – 321 էջ:
9. Շահինյան Լ., «Ուրարտու» առեղծվածը, Երևան, «Լույս» հրատ., 1994. – 223 էջ:
10. Սասունցի Դավիթ, Երևան, «Լույս» հրատ., 1981. – 343 էջ:
11. Ումառյան Ս., Սյունիքը դիցարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1981. – 114 էջ:
12. Капанцян Г. Хетские боги у армян в связи с хеттским влиянием на армян и генезисом армянского пантеона вообще, Ереван, Изд-во Гос. ун-та, 1940. – 78 с.
13. Чалоян В. К. История армянской философии, Ереван, Изд-во АН Арм. ССР, 1959. – 372 с.
14. Чалоян В. К. Развитие философской мысли в Армении. М., “Наука”, 1974. – 293 с.